Հետևյալ թարգմանությունը կօգնի ձեզ ինտերնետային կապի միջոցով արձանագրվելու Գլենդեյլ Քոլեջի Ուսման Շարունակման Ոչ Կրեդիտ դասարաններում: Թարգմանությունը կարող եք տպել և օգտվել արձանագրման ընթացքում:

Ուսման Շարունակման/Ոչ Կրեդիտ Դասարանների Ինտերնետային Դիմումագիր

Գլենդեյլ Քոմյունիթի Քոլեջի Ոչ Կրեդիտ Դասարանների այս դիմումագիրը կարող եք լրացնել ցանկացած ինտերնետային միացում ունեցող կոմպյուտերից:

- Արձանագրվելուց հետո ձեր ինտերնետային հասցեին կուղարկվի ուսանողական ID համար և անձը հաստատող PIN համար: Օգտագործելով այդ համարները Գլենդեյլ Քոմյունիթի Քոլեջի MyGCC բաժնում կարող եք ընտրել ու արձանագրվել ձեր ցանկացած դասարաններում:

  Հաջորդող քայլերը՝

1. Լրացրեք դիմումագիրը ամբողջությամբ, վերանայեք ու ճշտեք տառասխալները: Եթե ունեք սոցիալ սեքյուրիթի համար, գրանցեք այն նույնպես: Դա կօգնի համատեղելու տվյալները:
   - Քանի որ քոլեջի ծրագրերի մի մասը ֆինանսավորվում է նահանգի կողմից, գրանցելով սոցիալ սեքյուրիթիի համարը կօգնեք քոլեջին: Ձեր անձնական ինֆորմացիայի գաղտնիությունը ապահովվում է FERPA-ի պահանջներով:
   - Արձանագրվելիս պետք է ունենաք ինտերնետային հասցե (email), որի միջոցով մենք ձեզ կուղարկենք ուսանողական քարտի, ինչպես նաև անձը հաստատող PIN համարը: Այդ համարներով կարող եք բացել MyGCC բաժինը և գրանցվել ցանկացած դասարանում:

2. Հարցաթերթիկը լրացնելիս պատասխանեք բոլոր պահանջվող հարցերին: Այդ տեղեկությունների հիման վրա քոլեջը կարող է դիմել ու ձեռք բերել դրամական ֆոնդեր ձեր ուսումը ապահովելու համար: Օգնեք մեզ սպասարկելու ձեզ:

3. Ակադեմիկ ինֆորմացիայի բաժնում, ուսման նպատակը հարցին պատասխանեք ընտրելով ձեր անձնական նպատակին համապատասխանող նախադասությունը:

4. Ակադեմիկ ինֆորմացիայի բաժնում Term բաժնի տակ ընտրեք այն սեմեստրը, որը ցանկանում եք հաճախել:

5. Կրկին ստուգեք լրացված դիմումագիրը, հատկապես ինտերնետային հասցեն (email), ուր կուղարկվեն արդյունքները: Հանձնելով (Submit) անելով վերջացնում եք արձանագրությունը:

6. 18 տարեկանից ցածր անձերը պետք է նախքան արձանագրվելը հանդիպեն ակադեմիկ խորհրդատուի (Academic counselor) հետ, զանգահարելով (818)240-1000 x5678:

Գլենդեյլ Քոմյունիթի Քոլեջի Ուսման Շարունակման Դասընթացների Դիմումագիր

Հետևյալը Գլենդեյլ Քոմյունիթի Քոլեջի Ուսման Շարունակման Դասընթացների Դիմումագիրն է: Լրացրեք այն ճշգրտորեն և ամբողջությամբ, քանի որ դա կլինի ձեր հիմնական գրանցումը Գլենդեյլ Քոլեջի կայքում:

- Եթե արդեն ունեք ուսանողական ID համար, կարիք չկա նորից լրացնելու ամբողջ դիմումագիրը: Այդ ուսանողական համարով և անձնական PIN համարով կարող եք արձանագրվել MyGCC բաժնում:
- MyGCC բաժինը գտնվում է www.glendale.edu կայքում: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 818-240-1000 x5678 կամ գրել ce-glendale@glendale.edu ինտերնետային հասցեին:
- Նկատի ունեցեք, որ տալով անձնական ինտերնետային հասցե, դուք ավելի արագ կտեղեկացվեք ձեր դիմումագրի մասին: Արձանագրվելիս վերանայեք ու ճշտեք պահանջվող բոլոր տեղեկությունները, հակառակ պարագայում դիմումագիրը պրոցեսի մեջ չի դրվի: